

Պաշտոնական ընդդիմախոս

Ա.Մ. Խաչատրյանի

Կ Ա Ր Ծ Ի Ք Ը

Լիլիթ Հայկազի Սուրառյանի՝ «Իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. տեսական և մեթոդաբանական ասպեկտները» թեմայով ԺԲ.00.01-«Պետության և իրավունքի տեսություն ու պատմություն, պետական և իրավական ուսմունքների պատմություն» մասնագիտությամբ իրավաբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված ատենախոսության վերաբերյալ

Պաշտպանության նեկայացված թեկնածուական ատենախոսությունը նվիրված է պետության կարևորագույն գործառույթներից մեկի՝ իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրների բացահայտմանը, ինչպես նաև այդ գործունեության տեսական ու մեթոդաբանական տեսանկյունների վերլուծությանը:

Հետազոտության թեմայի արդիականությունը կասկած չի հարուցում, քանի որ այն բոլոր հասարակարգերում միշտ եղել է արդիական ու հրատապ, առավելիս անցումային հասարակական-քաղաքական համակարգերում, այդ թվում՝ Հայաստանի Հանրապետության պարագայում, որտեղ պետության Հիմնական Օրենքում 2015թ. կատարված արմատական փոփոխությունների արդյունքում տեղի է ունենում ինտենսիվ իրավական գործընթաց՝ գործող օրենսդրությունը Սահմանադրությանը համապատասխանեցնելու նպատակով: Նման իրավիճակում կարևորվում է իրավաստեղծ գործունեության տեսական նոր մոտեցումների մշակումը, ինչն այս կամ այն չափով կնպաստի իրավաստեղծ գործունեության կատարելազորմանը և օրենսդրական ակտերի որակական հատկանիշների ապահովմանը:

Հայրենական և խորհրդային իրավաբանական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվել իրավաստեղծ գործունեությանն առնչվող տեսական և մեթոդաբանական հարցերի գիտական մշակմանը: Դրանց առաջադրման և լուծման գործում նշանակալի ավանդ են ունեցել հայրենական և ոռու մի շարք տեսարաններ: Ներկա հետազոտական աշխատանքը, այդ առումով, պայմանավորված է մեր երկրում սահմանադրական փոփոխությունների հետևանքով իրավաստեղծ գործունեության ոլորտում առկա իրավիճակի զնահատման և դրա արմատական բարելավմանն ուղղված տեսական ու գործնական առաջարկությունների մշակման անհրաժեշտությամբ:

Բննարկվող հետազոտության առարկան է իրավաստեղծման տեսական և գործնական հիմնահարցերի համակողմանի ուսումնասիրությունը, որի նպատակն է իրավաստեղծման էության, հասկացության և սկզբունքների, այդ գործընթացի կառուցարգերի տեսական և մեթոդաբանական հիմնախնդիրների գիտական վերլուծությունը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործունեության կատարելազորման և ազգային օրենսդրության համակարգի գարզացման հիմնական ուղղությունների ու առաջնահերթությունների վերաբերյալ կոնկրետ առաջարկությունների մշակումը.

Իր առջև դրված նպատակին հետամուտ՝ ատենախոսը փորձել է լուծել հետևյալ

խնդիրները:

1) Վերլուծել իրավաստեղծման հասկացությունը, եռթյունը և իրավաբանական բնույթը, բացահայտել դրա կառուցվածքն ու գործառույթները՝ իրավական կարգավորման գործընթացում,

2) Վեր հանել իրավաստեղծման հետ կապված համակարգային կազմակերպական հիմնախնդիրներն ու դրանց առանձնահատկությունները,

3) Բացահայտել իրավաստեղծման կառուցակարգի առանձնահատկությունները, այդ գործընթացում առկա հիմնախնդիրները, ինչպես նաև մշակել առաջարկություններ՝ միտված իրավաստեղծ գործունեության և իրավակիրառ պրակտիկայի իրավական կարգավորման հետագա կատարելագործմանը:

Աշխատանքի ուսումնասիրությունից կարելի է եզրակացնել, որ հեղինակին հաջողվել է պատշաճ գիտական խորությամբ լուծել իր առջև դրված խնդիրները և հետազոտության արդյունքների հիման վրա ձևակերպել տեսական ու կիրառական նշանակություն ունեցող կոնկրետ առաջարկություններ:

Քննարկվող ատենախոսական աշխատանքի գիտական նորույթը դրսևորվում է իրավաստեղծ գործունեության մշակույթի զարգացման գործընթացում իրավաստեղծման կառուցակարգերի կատարելագործման և դրա ներուժի բացահայտման մեջ: Աշխատանքում հիմնավորվում է, որ իրավաստեղծման կառուցակարգերի գործընթացի գիտական հետազոտությունների գերակայությունը, ինչը բացահայտում է իրավաստեղծմանն առնչվող հիմնահարցերի հետազոտության նոր փուլ, իրավակազմական խնդիրների լուծման համար նոր մոտեցումների անհրաժեշտություն և դրանց գործնական կիրառում՝ նպատակ ունի բարելավել ընդունվող նորմատիվ՝ իրավական ակտերի որակը և իրավակարգավորումների արդյունավետությունը:

Հետազոտական աշխատանքի տեսական նշանակությունը նրանում է, որ հեղինակի կողմից ձևակերպված հետևողությունները, եզրահանգումները, եզրակացություններն ու իրավաստեղծ գործունեության վերաբերյալ ներկայացվող նոր հարցադրումներն ու մոտեցումները խորացնում են մեզանում առկա գիտելիքները իրավունքի տեսության տվյալ բնագավառի վերաբերյալ և կարող են տեսական հիմք հանդիսանալ նշված հիմնահարցերի հետազա ուսումնասիրությունների համար:

Հետազոտության գործնական-կիրառական նշանակությունը նրանում է, որ ատենախոսական աշխատանքի հիմնադրույթները և արդյունքները կարող են օգտագործվել օրինաստեղծ և իրավաստեղծ գործունեության, իրավակիրառ և իրավամեկնողական գործընթացներում՝ հիմք հանդիսանալով դրանց կատարելագործման համար, ինչպես նաև օգտագործվել ուսումնական դասընթացների ժամանակ:

Մեր կարծիքով, ատենախոսության գիտական արդյունքները հիմնավորվում են ազգային իրավաստեղծ պրակտիկայի քննական վերլուծությամբ, մասնագիտական գրականության լիարժեք օգտագործմամբ, ինչպես նաև ընդունված դատարակավական և այլ բարեփոխումների հայեցակարգերի ու ծրագրերի համադրման և իրավահամեմատական համակողմանի քննարկումների և վերլուծությունների արդյունքներով:

Ինքնասիա են հեղինակային դատողությունները Հայաստանի Հանրապետությունում օրենսդրության զարգացման հայեցակարգի և համապետական ծրագրի մշակման, այդ նպատակով նոր օրենսդրության

համակարգի հիմնադրույթների ստեղծման անհրաժեշտության մասին, որի նորմատիվ-իրավական բովանդակությունը պետք է ներառի համամարդկային և ազգային արժեքները, սոցիալական արդարության և տեսական-իրավական հավասարության սկզբունքները, մարդու իրավունքների ու ազատությունների իրական երաշխավորման կառուցակարգերը։ Դրա հետ մեկտեղ, աշխատանքում առկա են զիտական հետարքրություն ներկայացնող հետևողություններ՝ ազգային օրենսդրության ընդհանուր հայեցակարգի զարգացման հիմնական միտումների և ուղղությունների վերաբերյալ, որոնք ընդգծում են կատարված հետազոտության գործնական նշանակությունն ու կիրառական արժեքը։

Ընդհանուր առմամբ դրական գնահատելով կատարված աշխատանքը, այդուհանդերձ դրա վերաբերյալ ունենք առանձին դիտողություններ և նկատառումներ, որոնք միտված են առավել կատարյալ դարձնել ըննարկվող հետազոտությունը։

1. Այսպես, հեղինակն իր աշխատանքի առաջին զլիսի շրջանակներում, թերևս պետք է անդրադառնար իրավաստեղծ գործունեության միջազգային պրակտիկայի, ինչպես նաև ժամանակակից հայեցակարգային միտումների վերլուծությանը, ինչը սակայն ատենախոսության շարադրանքում բացակայում է։ Այս կապակցությամբ պետք է նկատենք, որ հեղինակային հրապարակումներից 2018թ. լույս տեսած մենագրությունը (184 էջ ծավալով) նվիրված է հենց նշված հարցերի լուսաբանմանը։

2. Պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթների 13-րդ կետում (էջ 12), հեղինակն անդրադառնալով իրավաճենավորող գործոնների համալիրին և կարևորելով դրանց դերը իրավաստեղծ գործընթացում, առանձնացնում է տնտեսական, սոցիալական, քաղաքական, միջազգային-իրավական և այլ գործոնները, որոնց ճիշտ հաշվառումը, ինչպես արդարացիորեն նկատում է ատենախոսը, կարող է եական ազդեցություն ունենալ օրինագծերի հիմնադրույթների մշակման որակի վրա և պայմանավորել կանխատեսելի իրավակարգավորումների արդյունավետությունը։ Միանգամայն համաձայն լինելով նշված զիտական հիմնադրույթի բովանդակությանը պետք է նկատենք, որ բուն ատենախոսական աշխատանքում բավարար անդրադարձ չկա վկայակոչված գործոնների և իրավաստեղծ գործունեության բնագավառում դրանց դերակատարմանն առնչվող հարցերի շրջանակի լուսաբանմանը։

3. Աշխատանքը կարծում ենք կշահեր, եթե դրա 3-րդ զլիսի շրջանակներում ատենախոսն անդրադառնար ՀՀ Նախագահի 2012թ. հունիսի 30-ի կարգադրությամբ հաստատված «Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2017թթ. ռազմավարական ծրագրի» և Հայաստանի Հանրապետությունում իրավաստեղծ գործունեության հիմնախնդիրների գնահատման լույսի ներքո այդ փաստաթղթի ունեցած դերակատարությանն առնչվող հարցերի շրջանակի լուսաբանմանը։

Մատնանշված դիտողություններն ու նկատառումներն ունեն մասնավոր բնույթ և չեն ստվերում I. Մուրադյանի աշխատանքի ընդհանուր առմամբ դրական գնահատականը։

Ատենախոսությունը և սեղմագիրը պատրաստված են դրանց ներկայացվող պահանջներին համապատասխան, իսկ աշխատանքի թեման և բովանդակությունը համապատասխանում են ընտրված մասնագիտությանը։

Ատենախոսության կառուցվածքը հեղինակին թույլ է տվել համակարգային, բազմակողմանի, ամբողջական և ճիշտ եղանակով լուծել հետազոտության թեմայի

37

Վերաբերյալ առաջ քաշված խնդիրները: Ատենախոսության սեղմագիրն արտացոլում է հետազոտության հիմնական դրույթները, իսկ ՀՀ Բարձրագույն որակավորման կոմիտեի կողմից հաստատված՝ զիտական հրատարակությունների համար ընդունելի պարբերականներում հեղինակի հրապարակած հոդվածները բավարար չափով արտացոլում են ատենախոսության հիմնական արդյունքները:

Վերը շարադրվածք հիմք է տալիս եզրակացնել, որ Լիլիթ Հայկագի Մուրադյանի «Իրավաստեղծ զործունեության հիմնախնդիրները Հայաստանի Հանրապետությունում. տեսական և մեթոդաբանական ասպեկտները» թեմայով ատենախոսությունն իրենից ներկայացնում է արդիական, գիտական նորույթ պարունակող, տեսական և զործնական նշանակություն ունեցող ավարտուն և ինքնուրույն ուսումնասիրություն, որը պարունակում է իրավունքի տեսության, իրավաստեղծ զործունեության և իրավակիրառ պրակտիկայի համար կարևոր նշանակություն ունեցող խնդիրների վերաբերյալ գիտականորեն հիմնավորված լուծումներ: Աշխատանքը համապատասխանում է «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգ»-ով սահմանված պահանջներին, ուստի դրա հեղինակն արժանի է իր կողմից հայցվող գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդդիմախոս՝ Իրավաբանական գիտությունների դոկտոր

Աննա Մամիկոնյան
Ա.Ա. Խաչատրյան,

Ա.Մ.Խաչատրյանի
Ստորագրության իսկությունը հաստատում եմ
ՀՀ Քննչական կոմիտեի գլխավոր
քարտուղար

Ա.Նիկոնյան



20 դեկտեմբերի 2020թ.